38. ՎԸԵՍԿԵ ԹՈԽԿԱՆ

Օխտը ախպերներ են ինձում, ուրանք էլ հրսած-փրսած, բայց շատ քյասիբ։ Մին օր տահանք հորը յըխբբողազ ըն անում, թա մըեզ պիտի փտակեմ։ Հաՙրը թա՝ մունք էսքան քյասիբ, ծրեզ հինչա՞վ փտակեմ։ Տղեքյը հըվաքվում են հորը նհետ խոսում, մալըհաթ անում, թա հու վըեր հիշտեղա կյա տոն, մին պեն պիրի։ Ծրանա նոը ամմըեն օր մինը մին փադ, մին չոփ, մինն էլ մին քար, մին արկաթ, յա մին օրիշ պեն ար նհետը պիրում տոն։ Կուճուր ախպերներն էլ պեն չի քթենում, հղբցրեն մաչին մին ըսպանած օց ա ինձում, մհակեն պտոկն ա քցում, պիրում սհարումը վըեր քցում։ Ախպերերքը կյամ են օցրեն ծոռ-ծոռ եշում, անց կենում։ Կուճուր ախպերերը իսկի վերջավն էլ չի օնում։

Մին օր կուճուր ախպերերը եշում ա, տրեսնում մին զուզզուն մին վըեսկե թոխկա չինգյերավը քցած, տանում ա։ Տա օցը պիրում ա քցում զուզզունեն առաչը, զուզզունը թոխկան օցեն քշտին վըեր ա քցում, օցը յոր ա օնում, քյինամ։

Կուճուր ախպերերը էտ վըեսկե թոխկան տանում ա տոն, տրանավ մըեծ-մըեծ տներ են շինում, լավ ապրուստ ըստեղծում, ըսկըսում մըրթըվարի ապրելը։ Տրանա նոը հաՙրը, մարը, մըեծ ախպերերքը ըսկսում են տրա կըլխավը պըտըպատ անելը։

Ըստուծանա իրեք խնձՙր վըեր ինգյի՝ մինն ըսողեն, երկունն էլ ըսկընողեն։